# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
# ՋԱՆՖԻԴԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջանֆիդա
համայնք, ՀՀ Արմավիրի մարզ, գ. Ջանֆիդա, 1 փող. 48/1, Հեռ. (093)
644006 , janfida.armavir@mta.gov.am

N 332
*09 դեկտեմբեր 2020թ.*

**ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ**
**ՄԱՐԶՊԵՏ**
**ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Մաթևոսյան

Ի լրում Ջանֆիդա համայնքի ղեկավարի 2020 թվականի դեկտեմբերի 08-ի թիվ 331 գրության, Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության օրենսդրության համապատասխանության համայնքի ավագանու 2020 թվականի նոյեմբերի 30-ի թիվ 12 նիստի թիվ 49, 50 որոշումների փոփոխված օրինակները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՄՍԱՐ ՂՈՐՂԱՆՅԱՆ

Կատ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0010, Վազգեն Սարգսյան 3/8 , հեռ. 594015

էլ. Փոստ suren.galstyan@justice.am

N 06/27.2/26695

<30> 11 2020 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋԱՆՖԻԴԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ ԿԱՄՍԱՐ ՂՈՐՂԱՆՅԱՆԻՆ

**Հարգելի պարոն Ղորղանյան**

Ի պատասխան Ձեր 2020 թվականի նոյեմբերի 9-ի թիվ 289 գրության՝ կից ներկայացվում է «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջանֆիդա համայնքի վարչական տարածքում 2021 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջանֆիդա համայնքի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պետական փորձագիտական եզրակացությունը:

**ՀԱՐԳԱՆՔՈՎ՝**

Invalid signature

X

Suren Galstyan

ՍՈՒՐԵՆ ԳԱԼՍՏՅԱՆ

Կատարող՝ Լիլիթ Մարտիրոսյան
ՀՀ ԱՆ իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Հեռ. (010) 594-124

## ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**«Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջանֆիդա համայնքի վարչական տարածքում 2021 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջանֆիդա համայնքի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ**

«Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջանֆիդա համայնքի վարչական տարածքում 2021 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջանֆիդա համայնքի ավագանու որոշման նախագծով առաջարկվում է սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջանֆիդա համայնքի վարչական տարածքում 2021 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը:

Այս առումով նախևառաջ անդրադառնալով ներկայացված Նախագծի հիմնավորմանը, հարկ ենք համարում նշել, որ՝

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *փորձաքննության ներկայացվող նորմատիվ իրավական ակտին կցվող հիմնավորման մեջ շարադրվում են կարգավորման ենթակա ոլորտի կամ խնդրի սահմանումը, առկա իրավիճակը (եթե կիրառելի է), կարգավորման նպատակները, ակնկալվող արդյունքը, ակտի նորմատիվ բնույթի հիմնավորվածությունը:*

Վերոգրյալ կարգավորման բովանդակային վերլուծությունից պարզ է դառնում, որ նորմատիվ իրավական ակտի ընդունման հիմնավորման ճիշտ կառուցվածքը և բովանդակությունն ունեն առանցքային նշանակություն, հետևաբար նորմատիվ իրավական ակտի Նախագծի հիմնավորման մեջ պարտադիր պետք է ներառել իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը, ընթացիկ իրավիճակը, խնդիրները, տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունը, կարգավորման նպատակը, բնույթը և ակնկալվող արդյունքները:

Այս առումով նկատի ունենալով այն հանգամանքը, որ Նախագծի հիմնավորումը չի համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված պահանջներին՝ անհրաժեշտ է այն համապատասխանեցնել

օրենքով՝ նորմատիվ իրավական ակտի հիմնավորման կառուցվածքին և բովանդակությանը ներկայացվող պահանջներին:

Միևնույն ժամանակ, Նախագծի վերաբերյալ հարկ ենք համարում ներկայացնել հետևյալ դիտողություններն ու առաջարկությունները.

1. Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջները՝ Նախագծում «թվական» բառն անհրաժեշտ է գրել ամբողջությամբ:

2. Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները՝ Նախագծի նախաբանում «Տեղական ինքնակառավարման մասին», «Տեղական տուրքերի և վճարների մասին», «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» բառերից հետո նշված «Հայաստանի Հանրապետության» բառերն անհրաժեշտ է հանել:

3. Նախագծի նախաբանում որպես լիազորող նորմ նշված է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 5-րդ մասը: Տվյալ պարագայում, նկատի ունենալով այն հանգամանքը, որ ներկայացված Նախագծի 2-րդ կետով նախատեսված է Նախագծի ուժի մեջ մտնելու ժամկետը՝ Նախագծի նախաբանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 5-րդ մասին արված հղումն անհրաժեշտ է հանել:

4. Նախագծի նախաբանում «առաջին մասի 18-րդ կետով» բառերն առաջարկում ենք փոխարինել «1-ին մասի 18-րդ կետով» բառերով:

5. Նախագծի 2-րդ կետում «տասներորդ օրը» բառերից հետո անհրաժեշտ է լրացնել «վերջակետ» կետադրական նշանը:

6. Նախագծին կից ներկայացված հավելվածի 1-ին կետում ամրագրված կարգավորումներն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի պահանջներին: Նույն դիտողությունը վերաբերելի է նաև Նախագծին կից ներկայացված հավելվածի 5-րդ կետի 4-րդ ենթակետում, 11-րդ և 14-րդ կետերում ամրագրված կարգավորումներին:

7. Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի պահանջները՝ Նախագծում անհրաժեշտ է ապահովել «Հայաստանի Հանրապետության դրամ», «ՀՀ դրամ», «դրամ» բառերի միատեսակ կիրառությունը:

Միևնույն ժամանակ, միատեսակ կիրառության պահանջներից ելնելով՝ առաջարկում ենք Նախագծով սահմանվող դրույքաչափերը նախատեսել միայն թվերով:

[illegible] սահմանվելու է մինչև 1000 դրամ:

Այս առումով հարկ ենք համարում նշել, որ Նախագծին կից ներկայացված հավելվածի 4-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությունում նշված դրույքաչափն անհրաժեշտ է վերանայել, քանի որ պարզ չէ, թե տեղական տուրքի կոնկրետ ինչ դրույքաչափ է գործելու և հաշվարկման ինչ մեխանիզմ է կիրառվելու:

Նույն դիտողությունը վերաբերելի է նաև Նախագծին կից ներկայացված հավելվածի 4-րդ կետի 1-ին ենթակետի «դ», «ե», «զ» պարբերություններին:

10. Նախագծին կից ներկայացված հավելվածի 4-րդ կետի 2-րդ ենթակետի «գ» պարբերությունում «5000» թվից հետո անհրաժեշտ է լրացնել «դրամ» բառը:

Նույն դիտողությունը վերաբերելի է նաև Նախագծին կից ներկայացված հավելվածի 4-րդ կետի 2-րդ ենթակետի «զ» պարբերությանը:

11. Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասում սահմանված այն պահանջը, որ նորմատիվ իրավական ակտում հղումները պետք է կատարվեն հստակ և ուղղակի՝ Նախագծին կից ներկայացված հավելվածի 9-րդ և 10-րդ կետերում անհրաժեշտ է հստակեցնել թե ինչ օրենքի մասին է խոսքը:

12. Նախագծին կից ներկայացված հավելվածի 14-րդ կետի 4-րդ ենթակետում նշված «Հայաստանի Հանրապետության Ջանֆիդա համայնքում կարող են սահմանվել տեղական վճարների հետևյալ տեսակները՝» բառերն անհրաժեշտ է վերանայել՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ Նախագծի 1-ին կետով առաջարկվում է սահմանել Հայաստանի ՀՀ Արմավիրի մարզի Ջանֆիդա համայնքի վարչական տարածքում 2021 թվականի համար տեղական վճարների դրույքաչափերը, այլ ոչ թե տեսակները:

13. Նախագծին կից ներկայացված հավելվածի 18-րդ կետում ամրագրված կարգավորումը բովանդակային առումով անհրաժեշտ է վերանալել և հստակեցնել:

**Իրավական ակտերի փորձաքննության**

**գործակալություն**

8. Նախագծին կից ներկայացված հավելվածի 2-րդ կետի 3-րդ ենթակետում անհրաժեշտ է վերանայել «սույն օրենքի իմաստով» բառերի կիրառումը:

9. Նախագծին կից ներկայացված հավելվածի 4-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությունում նշվում է, որ ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում տեղական տուրքը համայնքի տարածքում սահմանվելու է մինչև 1000 դրամ:

Այս առումով հարկ ենք hիամարում նշել, որ Նախագծին կից ներկայացված հավելվածի 4-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությունում նշված դրույքաչափին անհրաժեշտ է վերանայել, քանի որ պարզ չէ թե տեղական տուրքի կոնկրետ ինչ դրույքաչափ է գործելու և հաշվարկման ինչ մեխանիզմ է կիրառվելու:

Նույն դիտողությունը վերաբերելի է նաև Նախագծին կից ներկայացված հավելվածի 4-րդ կետի 1-ին ենթակետի «դ», «ե», «զ» պարբերություններին:

10. Նախագծին կից ներկայացված հավելվածի 4-րդ կետի 2-րդ ենթակետի «գ» պարբերությունում «5000» թվից հետո անհրաժեշտ է լրացնել «դրամ» բառը:

Նույն դիտողությունը վերաբերելի է նաև Նախագծին կից ներկայացված հավելվածի 4-րդ կետի 2-րդ ենթակետի «զ» պարբերությանը:

11. Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասում սահմանված այն պահանջը, որ նորմատիվ իրավական ակտում հղումները պետք է կատարվեն հստակ և ուղղակի՝ Նախագծին կից ներկայացված հավելվածի 9-րդ և 10-րդ կետերում անհրաժեշտ է հստակեցնել թե ինչ օրենքի մասին է խոսքը:

12. Նախագծին կից ներկայացված հավելվածի 14-րդ կետի 4-րդ ենթակետում նշված «Հայաստանի Հանրապետության Ջանֆիդա համայնքում կարող են սահմանվել տեղական վճարների հետևյալ տեսակները՝» բառերն անհրաժեշտ է վերանայել՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ Նախագծի 1-ին կետով առաջարկվում է սահմանել Հայաստանի ՀՀ Արմավիրի մարզի Ջանֆիդա համայնքի վարչական տարածքում 2021 թվականի համար տեղական վճարների դրույքաչափերը, այլ ոչ թե տեսակները:

13. Նախագծին կից ներկայացված հավելվածի 18-րդ կետում ամրագրված կարգավորումը բովանդակային առումով անհրաժեշտ է վերանայել և հստակեցնել:

***Իրավական ակտերի փորձաքննության***

***վարչություն***

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋԱՆՖԻԴԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջանֆիդա համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Ջանֆիդա, (093) 644006, janfida.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2020թվականի N 49

## ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 7-րդ կետով, <<Գույքահարկի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին.

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1 . Զիջել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջանֆիդա գյուղական համայնքի բնակիչների ավտոմեքենաների գույքահարկերը և տույժերը՝ համաձայն հավելվածի:

2 . Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՄԻՐԽԱՆՅԱՆ ԱՐՄԱՆ

ԱՅՎԱԶՅԱՆ ՎԼԱԴԻԿ

ԱՐՇԱԿՅԱՆ ԳՈՌԻԿ

ԶԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՉ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՂԱԶԱՐՅԱՆ ԱԼԲԵՐՏ

ՂԱՐԻԲՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ՇԻՐԻՆՅԱՆ ԱՇՈՏ

ՊՈՂՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՄՍԱՐ ՂՈՐՂԱՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋԱՆՖԻԴԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

---

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջանֆիդա համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Ջանֆիդա, (093) 644006, janfida.armavir@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

30 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2020թվականի N 50

ՋԱՆՖԻԴԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ ՆՐԱ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ < ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ և ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 28-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին.

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1 . Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջանֆիդա համայնքապետարանի աշխատակազմի և նրա ենթակայության տակ գտնվող բյուջետային հիմնարկների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N1, N 2, N 3 հավելվածի:

2 . Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի 1-ից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՄԻՐԽԱՆՅԱՆ ԱՐՄԱՆ

ԱՅՎԱԶՅԱՆ ՎԼԱԴԻԿ

ԱՐՇԱԿՅԱՆ ԳՈՌԻԿ

ԶԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՉ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՂԱԶԱՐՅԱՆ ԱԼԲԵՐՏ

ՂԱՐԻԲՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ՇԻՐԻՆՅԱՆ ԱՇՈՏ

ՊՈՂՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՄՍԱՐ ՂՈՐՂԱՆՅԱՆ**